ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/U-44» էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան **«06 » « 11 » 2026թ. ժամը 11:00**

ՀՀ ՆԳՆ 2026թ. կարիքների համար **ուղեգորգերի** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/U-44 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/U-44 ծածկագրով գնման ընթացակարգին **նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտում առկա է եղել անհամապատասխանություններ՝ փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

04.11.2026 թվականին **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին** տրվել է մեկ /1/ աշխատանքային օր, անհամապատասխանությունները շտկելու համար:

«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ը ժամանակին, պատշաճ կերպով կատարել է շտկումները:

Գնահատող հանձնաժողովը **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ը** հայտերը գնահատեց բավարար և որոշեց շարունակել ընթացակարգը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/U-44 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին**:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև *10-րդ օրացուցային օրը ներառյալ* ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին** կառաջարկվի կնքել **կենցաղային ապրանքների** ձեռքբերման գնման պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝

ՏՎ ԿՇԲ պետի պարտականությունները կատարող Ի. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝

ՏՎ ԿՇԲ գլխավոր մասնագետ Կ. Ավդալյան

ՏՎ ԿՇԲ առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյան

Քարտուղար՝

ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Ս. Մելքոնյան